ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԴՏՊ – Ծ1110.Մ12001/22-5

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ «ՁՈՐԱԿ» ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «07» «մարտ» 2022 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի (այսուհետ՝ Նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս կազմակերպության տնօրենի տեղակալ, տնօրենի պարտականությունները կատարող՝ Մ. Թոսունյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման N 4 հավելվածի և N 9.1 հավելվածի 9.1.16-րդ աղյուսակի «1110. Այլընտրանքային աշխատանքային ծառայություն» ծրագրի «12001. Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարման և դրամական փոխհատուցման տրամադրում» միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Նախարարությունը պարտավորվում է Կազմակերպությանը հատկացնել ՀՀ 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ մինչև 2,040.000 (Երկու միլիոն քառասուն հազար) ՀՀ դրամ, իսկ Կազմակերպությունը՝ պարտավորվում է իրականացնել Կազմակերպությունում Այլընտրանքային աշխատանքային ծառայողների դրամական բավարարման վճարները՝ սույն պայմանագրի անբաժանելի մասեր կազմող N 1 հավելվածով նախատեսված Միջոցառումներին (այսուհետ՝ Միջոցառումներ) համապատասխան, N 2 հավելվածով սահմանված ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի շրջանակներում:

1.2. Յուրաքանչյուր ամսվա համար այլընտրանքային աշխատանքային ծառայողին տրվում է ամսական դրամական բավարարում՝ պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի համար սահմանված՝ մինչև երեսուն հազար դրամի չափով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգել Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի բնականոն գործունեությանը.

2.1.2. սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Միջոցառումների պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունել իրականացված Միջոցառումները՝ իր

հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջել վճարել սույն պայմանագրի 6.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում իրականացվող Միջոցառումները, կամ դրա իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Միջոցառումների պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված Միջոցառումների արդյունքը Նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջել վճարելու իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Նախարարության կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել առանձին Միջոցառումների իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով Նախարարության կողմից տրամադրված գումարների հաշվառումն իրականացնել՝ հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան.

2.4.2. Միջոցառումների իրականացման նպատակով ֆինանսական միջոցներն օգտագործել սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված ֆինանսական ցուցանիշներին համապատասխան.

2.4.3. կատարել Նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Նախարարությանը ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5 հրամանով սահմանված տնտեսագիտական դասակարգման անալիտիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածի.

2.4.5. Նախարարությանը ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104 հրամանով սահմանված կարգով և ժամկետներում Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունները.

2.4.6. Սույն Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 10 օրյա ժամկետում Գլխավոր ֆինանսիստի հաստատմանը ներկայացնել ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը՝ համաձայն N 5 հավելվածի: Ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով պայմանավորված՝ համապատասխան հիմնավորումների հետ միասին,

Նախահաշվի յուրաքանչյուր փոփոխություն ներկայացնել Գլխավոր ֆինանսիստի համաձայնեցմանը, այնուհետև՝ հաստատմանը:
2.4.7. 2022 թվականի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվով նախատեսված միջոցների շրջանակներում անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով.
2.4.8. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Միջոցառման իրականացմանը վերաբերվող փաստաթղթերին ծանոթանալու Նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.
2.4.9. Նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունելու դեպքում, Նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությանը միջոցառման իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:
3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության կամ նրա կողմից լիազորված կազմակերպության կամ անձի կողմից:
3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ:
3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է Միջոցառման շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Միջոցառմանն առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1 Կազմակերպությունը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 5-ը, Նախարարություն է ներկայացնում «Հայտ-պահանջագիր» երեքական օրինակ՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 4 հավելվածի:
4.2. Կազմակերպությունը՝ Հայտ-պահանջագրի հետ միաժամանակ Նախարարություն է ներկայացնում կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 3 հավելվածի:
4.3. Նախարարությունը՝ Հայտ-պահանջագիրը ստանալու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում իր կողմից ստորագրված և կնքված Հայտ-պահանջագրի մեկ օրինակը ներկայացնում է Կազմակերպությանը, իսկ չստորագրման դեպքում՝ դրա պատճառաբանված մերժումը.
4.4. ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման 4-րդ կետի 13-րդ ենթակետով պայմանավորված՝ կազմակերպության կողմից պայմանագրով

նախատեսված տարեկան աշխատանքների արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2022 թվականի դեկտեմբերի 23-ը, իսկ որոշ ծախսային հոդվածների գծով դեկտեմբեր ամսվա արդյունքներով պայմանավորված խնայողությունների ետ վերադարձը իրականացնել մինչև հաջորդ տարվա հունվարի 20-ը:

5. Պայմանագրի գինը

5.1 Սույն պայմանագրի գինը կազմում է 2,040.000 (Երկու միլիոն քառասուն հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինն իր մեջ ներառում է Կազմակերպության կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ ներառյալ նաև բոլոր հարկերը, տուրքերը ու պարտադիր այլ վճարները:
5.2. Սույն պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ՝ սույն պայմանագրի 8.3 կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու դեպքում:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է Նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է 2022թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար:

8.2. Սույն պայմանագրից ծագած՝ կողմերի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցմամբ, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց կողմերի գրավոր համաձայնության:
8.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր (համաձայնագրեր) կնքելու միջոցով, որը (որոնք) կհանդիսանա (կհանդիսանան) սույն պայմանագրի անբաժանելի մասը (մասերը):
8.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով.
8.5. Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, 2, 3, 4, 5 հավելվածները բաղկացած են 7 էջից և համարվում են սույն պայմանագրի անբաժանելի մասերը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախարարություն՝	**Կազմակերպություն՝**
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան,Կառավարական տուն-3	Ք. Երևան, Արաբկիր համայնք, Քանաքեռի շրջանցիկ թունել
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011001345	Հ/Հ 900018002718
ՀՎՀՀ 01506515	ՀՎՀՀ 00009357
Նախարարության գլխավոր քարտուղար՝	Տնօրենի տեղակալ, տնօրենի պարտականությունները կատարող՝
_____ Ս. Մուրադյան	_____ Մ. Թուտունյանի
(ստորագրություն) Կ. Տ.	(ստորագրություն) Կ. Տ.

Հավելված N 1
«09» «Դեկտեմբեր» 2022թ. կնքված
N ԴՏՊ – Ծ1110.Մ12001/22-5 պայմանագրի

ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«Զորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (այսուհետ՝ կազմակերպություն) այլընտրանքային աշխատանքային ծառայություն են անցնում ընդհանուր թվով 6 այլընտրանքային աշխատանքային ծառայող (1 խնամող սանիտար, 1 խոհանոցի բանվոր, 2 բաղնիքի ու լվացքատան սանիտար և 2 բակի հավաքարար) համաձայն Այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի 29.01.2020թ. N1 և 26.07.2021թ. N1 արձանագրությունների և ՀՀ Կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 16-ի N 1525-Ն որոշման:

Ծառայողներին տրվում է ամսական դրամական բավարարում՝ պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի համար սահմանված՝ մինչև երեսուն հազար դրամի չափով:

հ/հ	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և գնահատման չափանիշները	վերջնա ժամկետը	Պահանջվող գումարը
1.	Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարման և դրամական փոխհատուցման տրամադրում	«Զորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ում այլընտրանքային աշխատանքային ծառայողների աշխատանքի կազմակերպումը, նրանց ամսական դրամական բավարարման տրամադրումը	1) Ծառայողներին տրվում է ամսական դրամական բավարարում՝ պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի համար սահմանված՝ մինչև երեսուն հազար դրամի չափով: Դրամական բավարարումը վճարվում է ծառայության վայրում: 2) Ծառայության ընթացքում ծառայողին տրվում է տարեկան 10 օրացուցային օր տևողությամբ արձակուրդ: 3) Ծառայողի երեխայի ծնվելու, ընտանիքի անդամի ամուսնության կամ մահվան դեպքերում նրան կարող է տրվել լրացուցիչ արձակուրդ՝ մինչև 5 օրացուցային օր տևողությամբ: 4) Ծառայողների խրախուսումն իրականացվում	1) «Զորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն»ՊՈԱԿ-ը այլընտրանաքային աշխատանքային ծառայողների գործառույթներն իրականացնելիս առաջնորդվում է «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 1059-Ն, 2013 թվականի հուլիսի 25-ի N 796-Ն որոշումներով, ինչպես նաև այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի	31.12.2022թ.	Սույն պայմանագրով նախատեսված և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների շրջանակներում

			է համապատասխան օրենսդրությամբ սահմանված կարգով: 5) Ծառայողի համար սահմանվում է վեցօրյա աշխատանքային շաբաթ: Ծառայողի աշխատաժամանակի տևողությունը չի կարող շաբաթական 48 ժամից ավելի կամ պակաս լինել:	որոշումներով: 2)Ծառայողների կողմից իրականացվել է աշխատանքային այն պարտականությունները՝ համապատասխան ծավալով, ինչը նախատեսված է կազմակերպության տվյալ պաշտոնը զբաղեցնող աշխատողների աշխատանքային պայմանագրով և/կամ պաշտոնի անձնագրով.		

Նախարարություն՝

Նախարարության գլխավոր քարտուղար՝

Ս. Մուրադյան

(ստորագրություն)

Կ. Տ.

Կազմակերպություն՝

Տնօրենի պարտականությունները կատարող՝

Մ. Թոսունյան

(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված 2
«07» «մարտ» 2022թ. կնքված
N ԴՏՊ- 1110_12001/22-5 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառական դասակարգման 02 բաժնի, 05 խմբի, 01 դասի, «1110. Այլընտրանքային աշխատանքային ծառայության» ծրագրի «12001. Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարման և դրամական փոխհատուցման տրամադրում» միջոցառմամբ նախատեսված միջոցների շրջանակներում «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ին դրամաշնորհի տրամադրման

(հազ.դրամ)

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը*	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական. դասակարգման հոդվածը	Ընդամենը տարեկան	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեից, ընդ որում՝											
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	463700	**2 040,0**	180,0	360,0	**540,0**	720,0	900,0	**1 080,0**	1 260,0	1 440,0	**1 590,0**	1 740,0	1 890,0	**2 040,0**
-այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարման		**2 040,0**	180,0	360,0	**540,0**	720,0	900,0	**1 080,0**	1 260,0	1 440,0	**1 590,0**	1 740,0	1 890,0	**2 040,0**

Նախարարություն՝ Ս. Մուրադյան

Կազմակերպություն՝ Մ. Թոսունյան

N 3 Հավելված
2022 թ."03" մարտի "կնքված
N ԴՏՊ – Ծ1110.Մ12001/22-5

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի «1110. Այլընտրանքային աշխատանքային ծառայություն» ծրագրի «12001. Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարման և դրամական փոխհատուցման ծրագրում» միջոցառման շրջանակներում այլընտրանքային աշխատանքային ծառայողների դրամական բավարարման վճարները իրականացման նպատակով

ՊՈԱԿ-ին ամսում փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ

հազ.դրամ

Ծախսային հոդվածներ			Հաստատված նախահաշվի գումարը	Ճշտված նախահաշվի գումարը	Հաշվետու ժամանակահատվածում			Տարեսկզբից աճողական			
Տնտեսագիտական դասակարգման ծածկագիրը		ծածկագիրը			Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Բարեգործական և այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Բարեգործական և այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	բարեգործական կազմակերպության անվանումը
տնտեսագիտական դասակարգման ետիկ հաշիվների անվանումը	**Տնտեսագիտական դասակարգման անալիտիկ հաշիվների անվանումը**										
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
ԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝		**x**	**0,0**	**0,0**	**0,0**	**0,0**	**0,0**	**0,0**	**0,0**	**0,0**	
ատուն ծախս			**0,0**	**0,0**	**0,0**	**0,0**	**0,0**	**0,0**	**0,0**	**0,0**	
ատողների աշխատավարձեր և լավճարներ		***4111000***	**0,0**	**0,0**	**0,0**	**0,0**	**0,0**	**0,0**	**0,0**	**0,0**	
	Մշտական աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	*411110*									

Տնօրենի ա/կ՝ _____ Մ. Թոսունյան
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ՝ _____ Ն. Խաչատրյան
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 4
« 07 » « մայիս » 2022թ. Կնքած
N ԴՏՊ- 1110_12001/22-5 պայմանագրի

ՀԱՅՏ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N

(ամսական, եռամսյակային աճողական)

ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառական դասակարգման 02 բաժնի, 05 խմբի, 01 դասի, «1110. Այլընտրանքային աշխատանքային ծառայության»ծրագրի «12001. Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարման և դրամական փոխհատուցման տրամադրում» միջոցառմամբ նախատեսված միջոցների շրջանակներում այլընտրանքային աշխատանքային ծառայողների դրամական բավարարման համար «Զորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ին « » « » 2022թ. մինչև « » « » 2022թ. ընկած ժամանակահատվածի համար դրամաշնորհի տրամադրման

N N	Ցուցանիշների անվանումը	Չափի միավորը	քանակը (գումարը)
1	**Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարման ծառայությունների գծով**		
1,1	Հաշվետու ժամանակաշրջանում այլընտրանքային աշխատանքային ծառայողների թվաքանակը	ծառայող	
1,2	Հաշվետու ժամանակաշրջանում մեկ ծառայողի հաշվով կատարված փաստացի ծախսը,	դրամ	
1,3	Հաշվետու ժամանակաշրջանում այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարման համար դրամաշնորհի հատկացման չափը /1.1*1.2/, այդ թվում	հազ. դրամ	***0,0***
1.3.1	-աշխատավարձեր և դրան հավասարված վճարներ	հազ. դրամ	
1.3.2	-եկամտային հարկ	հազ. դրամ	
2	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ընդհանուր գումարը /2=1.3/	հազ. դրամ	***0,0***

Բանկ՝ «ՀՀ ՖՆ գործառնական վարչության» Հ/Հ ՀՎՀՀ

Տնօրեն՝

_____
(ստորագրությունը)

Գլխավոր հաշվապահ՝

(ստորագրությունը) (անուն,ազգանունը)

Կ.Տ

« » « » 2022թ.

Նախարարության գլխավոր քարտուղար՝

_____
(անուն,ազգանունը)

Պատասխանատու
ստորաբաժանման ղեկավար՝_____

(ստորագրությունը) (անուն,ազգանունը)

Կ.Տ

N 5 Հավելված
2022 թ. «07» «Մարտ» կնքված
N ԴՏՊ – Ծ1110.Մ12001/22-5 պայմանագրի

«Հ Ա Ս Տ Ա Տ Ո Ւ Մ Ե Մ»
ԼԻԱԶՈՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳԼԽԱՎՈՐ
ՖԻՆԱՆՍԻՍՏ _____ (ստորագրություն) _____ (Ա.Հ.Ա.)

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1.Կազմակերպության անվանումը՝

2. ՀՎՀՀ

3. Փոստային հասցեն

4. Կազմակերպության տեղաբաշխման մարզի կոդն ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման

5.ՀՀ պետական կառավարման լիազորված մարմնի անվանումը _____

6.Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման ծածկագիր/բաժին, խումբ

7.Չափի միավորը՝ հազար դրամ

Տողերի NN	Ֆինանսատնտեսական գործունեության դրամական միջոցների գոյացման աղբյուրների և դրանց հաշվին իրականացվող ելքերի (ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի)		Առաջին եռամսյակ			Առաջին կիսամյակ			Ինն ամիս			Տարի		
	Անվանումները	Տնտե-սա գիտա-կան ծածկագիրը	Նախա-հաշիվ	Նախահաշ-վում կատարված փոփոխու-թյունները (ավելացումը՝ /+/, պակասե-ցումը՝ /-/)	Հաստատված (ճշտված) նախահաշիվ	Նախա-հաշիվ	Նախահաշ-վում կատարված փոփոխու-թյունները (ավելացումը՝ /+/, պակասե-ցումը՝ /-/)	Հաստատված (ճշտված) նախահաշիվ	Նախա-հաշիվ	Նախահաշ-վում կատարված փոփոխու-թյունները (ավելացումը՝ /+/, պակասե-ցումը՝ /-/)	Հաստատված (ճշտված) նախահաշիվ	Նախա-հաշիվ	Նախահաշ-վում կատարված փոփոխու-թյունները (ավելացումը՝ /+/, պակասե-ցումը՝ /-/)	Հաստատված (ճշտված) նախահաշիվ
Ա	Բ	Գ	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3
2000000	**Ի. ԸՆԹԱՑԻԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 2112000+տող 2113000)**	x												
	այդ թվում՝													
2112000	**2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ**	x												
	որից՝													
2112300	2.3 Ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակար-դակներից	x												
2112310	2.3.1 ընթացիկ ներքին պաշտո-նական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից,	733100												

	այդ թվում՝													
2112311	2.3.1.1 պետական բյուջեից, այդ թվում՝	x												
2112312	2.3.1.1.1 պետության կողմից պատվիրակված ծախսերի փոխհատուցում	x												
1000000	**II. ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 1100000+ տող 4000000)**	X												
	այդ թվում՝													
1100000	**Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ (տող 1110000+ տող 1120000 + տող 1140000+տող 1150000+տող 1160000+տող 1170000)**	x												
	այդ թվում՝													
1110000	**1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (տող 1111000+ տող 1112000+տող 1113000 +տող 1115000+տող 1116000)**	x												
1111000	- Աշխատողների աշխատա-վարձեր և հավելավճարներ	**411100**												
3000000	III. ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՖԻՑԻՏ(ՀԱՎԵԼՈՒՐԴ) (տող 1000000 - 2000000)	x												
5000000	IV. ԴԵՖԻՑԻՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ													
5124000	**2.4. Կազմակերպության ելքերի ֆինանսավորմանն ուղղվող տարեսկզբի մի-ջոցներ**	x												
5125000	**2.5. Կազմակերպության հաշվից (ազատ մնացորդ) համապատաս-խան բյուջե փոխանցվող միջոցներ, այդ թվում**	x												
5125100	**2.5.1 պետական բյուջե**													
5125200	**2.5.2 համայնքների բյուջեներ**													
5126000	**2.6.Հաշվետու ժամանակա-շրջանում կազմակերպության հաշվի ազատ միջոցներ**	x												

_____ _____ 2022 թ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

_____ (ստորագրություն) _____ (Ա.Հ.Ա.)

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ

_____ (ստորագրություն) _____ (Ա.Հ.Ա.)